

դրութենէն ետքը քիչ մը աւելի լաւնայ այդ մարդկութենէ զուրկ տէրութեան վիճակը՝ եթէ Եւրոպացւոց հսկողութեամբն և եթէ իրենց ու քրիստոնէական կրօնքին հոն ազատութիւն գտնալովը, որ այս նոր դաշնազրութեանս գլխաւոր պայմաններէն մէկն է :

Ախամի բագաւորին ամաղոնները :

Ախամի երկրին զինուորութեան մէջ նշանաւոր և հետաքրքրական է Եւրոպացւոց համար կանանց գունդը, որոնք թագաւորին անձնական պահապաններն են : Ի՞ս գունդը բազկացած է չորս հարիւր կնիկներէ, որոնք աշխարհքին կտրիծ՝ ու վայելուց օրիորդներուն մէջէն ընտրուած են . առատ ուոճիկ մը կը վայելն, և զինուորական ընտիր հրահանգով կրթուած են : Խասուիրեք տարուան հասակին կը մտնան ծառայութեան, և երբոր քսանըհինգ տարուան ըլլան՝ պահեստի գունդը կ'անցնին և ինչուան իրենց մահը արքունական դրդեակներու և տէրութեան կալուածներու պահպանութեանը սահմանուած են : Ինտրուած ատեննին՝ կուսութեան ուխտ կ'ընեն, զոր ոչ երբէք կրնան լուծել բայց եթէ թէ որ թագաւորն ու զենայ իր օրինաւոր կանանց կարգը դասել անոնցմէ . այս դիպուածը երբեմն կը պատահի, երբոր թագաւորը զինուորական հրահանգներու և զինաշարժութեան մէջ շատ գերազանցած տեսնայ իրենցմէ մէկը : Ի՞սպիսի փոխարինինի մը յոյսը անանկ գովելի նախանձաւութիւն մը կը ձգէ մէջերնին, որ անհաւատալի է :

Հագուստնին Ճոխն է և աղուոր տեսքով . հանդիսի օրեր հագած զգեստնին՝ Ճերմակ բուրդէ հանդերձ մըն է ոսկով ասղնեգործած, որ ինչուան ծընկուընին կը հասնի . զրահէ թեթե կիսազգեստ մը այս հագուստը կ'ամբողջացընէ, և ոսկեզօծ զրահէ լանջապանակ մըն ալ մարմնոցն վերին մասը պաշտ

պանելու կը ծառայէ . թեւելնին աղաստ է, որպէս զի կարենան զէնք գործածել . գլուխնին ալ ոսկեզօծ պզաի սաղաւարտ մը կը զնեն : Ի՞ս զգեստը հագած օրերնին՝ նիզակով միայն կը զինուին, զոր մեծ ճարտարութեամբ կը գործածեն : Խակ սովորական օրերու հագուստնին շատ աւելի պարզ է, և գլխաւոր զէնքերնին ալ հրացան է, զոր նոյն յաջողակութեամբ կը բանեցընեն :

Լանանց գունդը չորս խումբերու քամնուած է, որոնց իւրաքանչիւրը հարիւր զինուոր ունի, և ասոնց ամենուն վրայ կը հրամայէ իրենց մէջէն ընտրւած զնդապետ մը : Երբ այս գլխաւորնին կը մեռնի, խումբերը մէկտեղ կը հաւաքուին, և իրեք օր զինուորական փորձեր կ'ընեն թագաւորին առջեւ, որ մէջերնին ամենէն աւելի յաջողակն ու ընդունակը կ'ընտրէ ան պաշտօնին :

Լըդի գնդապետը, որ վեց տարիե՛ի վեր այս պատուցն հասած է, 1851 թագաւորին կեանքն ազատելու արդիւնքն ունեցած է վագրի որսի մը միջոց : Լըդունեաց մէջ մեծ համարմունք ունի ասիկայ, և ընդարձակ իշխանութիւն մը կը բանեցընէ իր զինուորներուն վրայ : Լըդունական ազգատոհմին իշխաններուն պէս շքեղ ապարանք ունի, և իր անձնական ծառայութեանը համար տասը փիզ :

Ուագաւորը ոչ երբէք արշաւանքի մը կ'երթայ առանց իր այս անձնական պահապաններուն գնդին, նոյնպէս ոչ որսի կամ ժուռ գալու կ'ելլայ առանց ուղեկից առնելու ասոնցմէ մէկ մաս մը : Խւրաքանչիւր զինուորի հինգ սեաւ կանայք կը ծառայեն . ասանկով ներքին հոգերէ ազատ ըլլալով բողորովին, իրենց արուեստին աշխատութիւններուն կրնան համարձակ ետևէ ըլլալ : Ի՞աղքին մօտերը կրթութեան դաշտ մը կայ, ուր ամէն շաբաթ իւրաքանչիւր խումբ կ'երթայ և երկու օր նիզակ և սուր գործածելու, ամէն տեսակ հրացանով նշան առնելու, և պատերազմական շարժմունքներու փորձեր կ'ընէ : Ուագաւորն ամէն ամիս ներկայ կ'ըլլայ

այս կրթութեանց՝ իր եղբօրը հետ
մէկաւեղ, և արժանաւոր հանդիսացող-
ներուն մրցանակներ կը բաշխէ, կամ
ապարանջաններ և կամ ուրիշ աղուոր
զարդեր : (Օ ինուորները իրենց մեծ
պատիւ կը սեպեն այս մրցանակները,
մանաւանդ որ անոնցմով եւրոպացի զօ-
րաց տասնապետներուն ու յիսնապետ-
ներուն չափ իշխանութիւն մը կը ստա-
նան իրենց ընկերներուն վրայ : Վիչ
անգամ պատիժ տրուելու առիթ կ'ըլ-
լայ . և այն ալ ոռջիկնին քիչ կամ շատ
ատեն կտրելուն վրայ է, որ իրեք ամի-
սէն աւելի երկայն չտևեր : Ծիչուառա-
բար այս կանանց մէջ շատ յաճախեալ
է մենամարտութիւնը, որ գնդապետին
թոյլտուութեամբը կ'ըլլայ միշտ, և
այն խմբին ներկայութեանն առջև՝ ո-
րուն զինուորներէն են երկու հակառա-
կորդները : Այս կռուոյն մէջ, որ միշտ
հատու զէնքով՝ կ'ըլլայ, երբեմն կը
հանդիպի որ մենամարտիկներուն մէկը
մեռնի . այն մեռնողին յուղարկաւորու-
թիւնը մեծ հանդիսով կ'ըլլուի, և քըր-
մապեաը գովեստ մը կը խօսի վրան ու
կը ծանուցանէ որ իր քաջութեամբն
արժանի եղած է անիկայ երջանկացյա-
ւիտենական բնակարանն ընդունուելու :
Այս հանդիսէն ետքը բոլոր զինուոր-
ները միւս մենամարտիկին իր ձարտա-
րութեանն համար ուրախակցութիւն
կ'ընէն . բայց վայելքութեան համար՝
երկու ամիս զինուորական ծառայու-
թիւնէ կ'արձեկուի անիկայ, և այս մի-
ջոցին մէջ պարտաւորուած է պաքով
ու ազօթքով անցընել բոլոր իր ժամա-
նակը : Ի բաց առեալ մենամարտու-
թեան պարսաւելի սովորութիւնը, կա-
նանց գունդը ուրիշ կողմանէ անանկ ա-
զէկ բարեկարգութեամբ կանոնաւո-
րուած է՝ որ բոլոր սիամական զօրաց օ-
րինակ է իր վարժ հմտութեամբն ու
իր քաջութեամբը :

1 գ.դ. Arme blanche.

ՀՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ճանապարհորդութիւն Պողիկունուի ի Հավմ :
(Ցես երես 312)

Բաց ՚ի այս ըրս քրմական գասերէն . որոնց
վայ մինչեւ հիմա խօսեցայ, և որոնք նոյնչափ
թուով առանձին ժողովքներ կը կայացընեն, և
իբրև չոռմայ պաշտամունքը կանոնաւորող կը հա-
մարուին, ուրիշ սրբազն պաշտօնէից գասեր ալ
կան, նոյնպէս յարգելի . թէպէտ և պաշտօննին
երկրորդգական : Ինչպէս են Արշակուն կամ Արշա-
կաւան Եղիսաբէդ ըստածները, որոնց ասանկ կո-
չուելուն պատճառն է որ աստուածոց զոհ կ'ընեն
սրտորելից բարեբերութեանը համար : Ասոնք
սկզբնաւորեցան Ակաս Լաւրենտիայի հառմուլո-
սի ստնամուին տասուերկու որդիկներէն, որոնք
իրենց մօրը հետ մէկն տարի վերոյիշեալ
վախճանովն ողջակեզներ կ'ընեն : Երբոր ասոնց-
մէ մէկը մեռաւ, թագաւորն ուզեց անոր աեղը
անձամբ լեցընել, Արշակուն Եղիսաբէդ կոչելով այս
միաբանութիւնը, ինչպէս որ կը կոչուին մինչեւ
հիմա : Գլուխնին ձերմակ վարսակալ կը գնեն, և
հասկերէ պասկով կը զարդարեն . և գիտուեցաւ
որ թագաւորաց վրանառուելին ետքը՝ առջի պսակ
կրողներն իրենք եղան : Իրենց պատուանուուրը
սրբազնն է, անանկ որ պասորանաց և մինչեւ գե-
րութեան մէջ ալ կը պահնեն զայն :

Քրմական ուրիշ գաս մ'ալ կը կայացընեն Փէ-
հեւկան+ ըստածները : Առանց ասոնց խաղաղու-
թեան կամ նիզակակցութեան գաշինք չդրուիր .
նոյնպէս և ոչ պատերազմի հրատարակում կ'ըլ-
լուի, որովհետեւ իրենց մասնաւոր պաշտօնն է ար-
գելուլ որ հասարակապետութիւնը անիրաւ պա-
տերազմի մը ձեռք չզարնէ : Անկու Մարտիոս գի-
րենք հասատելով, ուզեց իրենց միջոցովք սրբ-
բազն սեպել տալ այն պատերազմները՝ որոնց
ստիպուած ըլլոր ձեռք զարնելու, հետևելով այս
բանիս մէջ նումայի՝ որ քրութեամբք ու ծե-
սերով մտածեց սրբազնն երկոցընելու քաղաքական
կառավարութեան բոլոր գործովութիւնները :
Երբոր հասարակապետութիւնը ժողովրդեան մը
գէմ արդարացի գանգատ մը ունենայ, փէկեա-
ւեան քուրմ մը կը իրկէ անոր՝ հատուցում պահան-
ջելու համար անկից : Եթէ այն ժողովուրդը հա-
տուցումն ընելու կը գանդաղի կամ կը ժիստէ, ա-
միս մը ժամանակ թող կը արուի անոր որոշելու .
եթէ գեռ կը յամառի, վերոյիշեալ քուրմը հայ-
րենական սահմանագույնը գառնալով թշնամի
ժողովրդեան երկիրը տէգ մը կը նետէ, որն որ
մէկ կողմէն արիւնուած՝ միւս կողմանէ այրած
կ'ըլլայ . որպէս զի այս կրկին նշաններովն իմացը-
նէ որ չուոմ սրով և հրով իր նախատանաց վկէժը
պիտի առնու, և միանգամայն բարձր ձայնով կը
հնչեցնէ այն ձնը՝ որով սովորաբար պատերազմի
կը հրատարակուի : Այս սովորութիւնը իրեն
դրացիներուն հետ պատերազմինը առիթ ունէր .
բայց երբոր պատերազմին սահմանը խորիս յայէն
դուրս ելաւ, նոյն ձեռվ արձան մը կանգնուեցաւ